ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/029

ք. Երևան «13» Հոկտեմբեր 2020թ.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»-ն ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է «ՀՀ պետական եկամուտների կոմիտե»-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Վալսա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վահե Ավետիսյանի, որը գործում է «Վալսա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն հրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1,725,100 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի

մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդ մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել լմեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Վալսա» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Մ. Խուդյակով 84/4-50
ՀՎՀՀ 02647057	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ900011054013	Հ/Հ 2472402588520000
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 01017079
գործառնական վարչություն	Տնօրեն
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան	Վ. Ավետիսյան
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/ Կ.Տ/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 13 » Հոկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/029 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	39541120/6	Շնաթոկ 1	Առաջարկվող ապրանքը պատրաստված է նեյլոնե ամուր գործվածքից: Շնաթոկը բազմակի կարգավորվում է ի շնորհիվ երկու ամուր կեռիկների և 4 ամուր մետաղյա օղակների: Բոլոր մետաղական օղակները զոդված են: Շնաթոկի յուրաքանչյուր եզր ունի ամուր մետաղից կեռիկներ (карабин), որոնք ամրացված են 2 ամուր մետաղյա ամրակներով, ինչպես նաև զիգզագաձև կարվածքով: Շնաթոկի ամբողջ երկարության վրա՝ 2 եզրից 40սմ, 1 եզրից՝ 10սմ, և 1 մ երկարության վրա ամրացված են ամուր մետաղյա 2 ամրակներով և զիգզագաձև կարվածքով 4 ամուր մետաղյա օղակներ, որոնց տրամագիծը 2.5 սմ է: Գույնը՝ սև: Յուրաքանչյուր 1 շնաթոկը առանց կեռիկների ունի 2մ երկարություն և 2սմ լայնություն:	մետր	2900	580,000	200	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	200	Մատակարարումն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
2	39541120/7	Շնաթոկ 2	Առաջարկվող ապրանքը պատրաստված է նեյլոնե ամուր	մետր	1940	291,000	150	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան,	150	Մատակարարումն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան

			գործվածքից: Շնաթոկը բազմակի կարգավորվում է ի շնորհիվ երկու ամուր կեռիկների և 6 ամուր մետաղյա օղակների: Բոլոր մետաղական օղակները զոդված են: Շնաթոկի յուրաքանչյուր եզրից ունի ամուր մետաղից կեռիկներ (карабин), որոնք ամրացված են 2 ամուր մետաղյա ամրակներով, ինչպես նաև զիգզագաձև կարվածքով: Շնաթոկի ամբողջ երկարության վրա՝ 2 եզրից 40սմ, 2 եզրից 125սմ 1 եզրից՝ 10սմ, և 2.5 մ երկարության վրա ամրացված են ամուր մետաղյա 2 ամրակներով և զիգզագաձև կարվածքով 6 ամուր մետաղյա օղակներ, որոնց տրամագիծը 2.5 սմ է: Գույնը՝ սև: Յուրաքանչյուր 1 շնաթոկը պետք է ունենա 5մ երկարություն և 2սմ լայնություն:				Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին		հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
3	39541120/8	Վզկապ 1	Առաջարկվող ապրանքը պատրաստված է նեյլոնե ամուր գործվածքից: Նախատեսված է էներգետիկ և խոշոր ցեղատեսակի շների համար: Այն կոշտ է, չծգվող, լվացվող և հեշտ մաքրվող: Վզկապի վրա կա մեկ մետաղական ամուր զոդված օղակ, որը տեղադրված է փականից 10 սմ հեռավորության վրա և ամրացված է զիգզագաձև կարվածքով և ամուր մետաղական ամրակներով: Վզկապի վրայի ճարմանդը, որը կարգավորում է վզկապի երկարությունը, ինչպես նաև փականը պատրաստված են ամուր մետաղից: Գույնը՝սև: Յուրաքանչյուր 1 վզկապը ունի 60սմ երկարությունև 3 սմ լայնություն: Վզկապը ունի մինչև 40սմ երկարությամբ կարճանալու հնարավորություն:	մետր	8400	252,000	30	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	30	Մատակարարումն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
4	39541120/9	Վզկապ 2	Առաջարկվող ապրանքը պատրաստված է նեյլոնե ամուր գործվածքից:Նախատեսված է էներգետիկ և միջին կամ փոքր ցեղատեսակի շների համար: Այն կոշտ է, չծգվող, լվացվող և հեշտ մաքրվող: Վզկապի վրա կա մեկ	մետր	7400	29,600	4	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	4	Մատակարարումն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

			մետաղական ամուր զոդված օղակ, որը տեղադրված է փականից 10 սմ հեռավորության վրա և ամրացված է զիգզագաձև կարվածքով և ամուր մետաղական ամրակներով: Վզկապի վրայի ճարմանդը, որը կարգավորում է վզկապի երկարությունը, ինչպես նաև փականը պատրաստված են ամուր մետաղից:Գույնը՝սև: Յուրաքանչյուր 1 վզկապը ունի 40սմ երկարություն և 2 սմ լայնություն: Վզկապը ունի մինչև 20սմ երկարությամբ կարճանալու հնարավորություն:							
5	39541120/10	Վզկապ 3	Առաջարկվող ապրանքը պատրաստված է պողպատե չժանգոտող մետաղից: Վզկապի ներսի մասում կան 10 շարքով դասավորված երկուական ցցեր՝ 2.5 մմ երկարությամբ: Վզկապը ունի երկու հիմնական մասեր լենտային մաս՝ ցցերով և շղթա, որն իր մեխանիզմով կարգավորում է շղթայի երկարությունը: Շղթայի վրա ամրացված է մետաղական զոդված օղակ, որպեսզի հնարավոր լինի այն ամրակցել շնաթոկին: Օղակի տրամագիծը՝ 2.5սմ:Յուրաքանչյուր 1 վզկապը ունի 50սմ երկարություն և 4սմ լայնություն:	մետր	7900	39,500	5	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	5	Մատակարարումն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
6	37411710/2	Սանձ	Առաջարկվող ապրանքը պատրաստված է բարձր որակի նեյլոնե գործվածքից: Փականը, ճարմանդը և բոլոր կիսաօղակները զոդված են: Սանձը կարգավորվում է շնորհիվ մետաղական ճարմանդի: Սանձի գոտիների կառուցվածքը թույլ է տալիս կարգավորել սանձը շան կառուցվածքին համապատասխան: Սանձի առջևի մասը կարգավորվում է լույս արտացոլող, կպչուն ժապավենով: Սանձը նախատեսված է փոքր ցեղատեսակի շների համար Գունը՝սև, չափը՝ S (40-80սմ):	հատ	24,800	124,000	5	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	5	Մատակարարումն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
8	37521240/3	<<Ապորտ>>խաղ ալիք գնդակշների	Առաջարկվող ապրանքը պատրաստված է բնական	հատ	2450	49,000	20	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան,	20	Մատակարարումն իրականացվում է

		վարժեցման համար	կաուչուկից: Տրամագիծը՝ 7,6 սմ					Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
10	33711320/3	Ֆուրմինատոր սանր շների համար	Առաջարկվող ապրանքը ունի կայուն ռետինե բռնակ: Նախատեսված է շան միջին և կարճ չափսի մազերի հեռացման համար: Սանրի ատամները մետաղյա են:	հատ	7900	79,000	10	Ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	Մատակարարումն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
11	33711320/4	Սանր շների համար	Առաջարկվող ապրանքը ունի կայուն ռետինե բռնակ, բարակ և մանր ատամներ: Նախատեսված է աղվամազը հեշտ հեռացնելու համար: Սանրի ատամները մետաղյա են:	հատ	2400	48,000	20	Ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊ ՎՇնագիտական /կենտրոն/ բաժին	Մատակարարումն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
12	33711310/3	Չոր շամպուն շների համար	Առաջարկվող ապրանքը ցանափոշի է: Այն օգտագործվում է եղանակային ցուրտ պայմաններում շների լոգանքի համար: Չեզոքացնում է տհաճ հոտերը, նրբորեն մաքրում է մաշկը: Շամպունը պարունակում է. Եգիպտացորենի օսլա, նատրիումի բիկարբոնատ, բույրեր, կոսմետիկ սպիտակ կավ (կաոլին), որոնք նորմալացնում են շան մորթու հիմնական ֆունկցիան, հեռացնում մեռած բջիջները, մաքրում ծակոտիները և խոնավացնում մորթին: Նախատեսված է բոլոր տարիքի և ամեն ցեղատեսակի շների համար: Քաշը՝ 200գր	հատ	4600	92,000	20	Ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	Մատակարարումն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
13	33711310/4	Շամպուն շների համար	Առաջարկվող ապրանքը հեղուկ շամպուն է: Այն նախատեսված է մակաբույծների ոչնչացման և մորթու խորը մաքրման համար: Միջոցը հանգստացնում է մաշկը և հանում է գրգռվածությունն ու քորը: Կանխարգելում է մազերի թափվելն ու ամրացնում դրանք: Բաղադրության մեջ կա Դելտամեթրին-0.01%, ինչպես նաև էքզիպենտներ՝ ներառյալ գլիցերին, լանոլին, երիցուկ և կալենդուլա: Քաշը՝ 270մլ	հատ	1950	39,000	20	Ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	Մատակարարումն իրականացվում է *Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում*
14	39221170/3	Կերակրամաններ շների համար	Առաջարկվող ապրանքը կլոր է և պատրաստված է բարձրորակ չժանգոտող պողպատից և	հատ	3400	102,000	30	Ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6	Մատակարարումն իրականացվում է *Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20*

			քրոմապատ է, որը թույլ կտա երկար ծառայել, և երկար ժամանակ պահպանել առաջնային տեսքը: Այն հեշտ է լվացվում և դասվում է էկոլոգիապես մաքուր ապրանքների դասին: Կերակրամանի պատերը հաստ են, ընդհանուր տարողությունը 4.5 լ, իսկ տրամագիծը՝ 28 սմ:					ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին		օրացուցային օրվա ընթացքում

**Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը իրականացվում է մատակարարի կողմից՝ իր միջոցներով և իր հաշվին*

ԳՆՈՐԴ
ՀՀ պետականեկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան_____
ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ
«Վալսա» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Խուդյակով 84/4-50
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2472402588520000
ՀՎՀՀ 01017079
Տնօրեն

Վ. Ավետիսյան_____
/ստորագրություն/

Հավելված N 2
« 13 » Հոկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/029 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
				հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39541120/6	4269	Շնաթոկ 1	580000	580000	580000	**580000**
2	39541120/7	4269	Շնաթոկ 2	291000	291000	291000	**291000**
3	39541120/8	4269	Վզկապ 1	252000	252000	252000	**252000**
4	39541120/9	4269	Վզկապ 2	29600	29600	29600	**29600**
5	39541120/10	4269	Վզկապ 3	39500	39500	39500	**39500**
6	37411710/2	4269	Սանձ	124000	124000	124000	**124000**
8	37521240/3	4269	<<Ապորտ>>խաղալիք գնդակշների վարժեցման համար	49000	49000	49000	**49000**
10	33711320/3	4269	Ֆուրմինատոր սանր շների համար	79000	79000	79000	**79000**
11	33711320/4	4269	Սանր շների համար	48000	48000	48000	**48000**
12	33711310/3	4267	Չոր շամպուն շների համար	92000	92000	92000	**92000**
13	33711310/4	4267	Շամպուն շների համար	39000	39000	39000	**39000**
14	39221170/3	4267	Կերակրամաններ շների համար	102000	102000	102000	**102000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Վալսա» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Մ. Խուդյակով 84/4-50
ՀՎՀՀ 02647057	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ900011054013	Հ/Հ 2472402588520000
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության	ՀՎՀՀ 01017079
Գլխավոր բաժանմունք	Տնօրեն
Է. Գևորգյան __________	Վ. Ավետիսյան __________
ստորագրություն Կ.Տ.	ստորագրություն Կ.Տ.

Հավելված N 3
« 13 » Հոկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/029 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
Գտնվելու վայրը _____	Գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«13» Հոկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/029 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվումէ, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն